

## ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ԵՎ ԳՈՅԱՆՑԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ընկերք միամիտք մարմնական կենցաղոյս. ճաշատեղիք հաւասարք և հոգւով միացեալք. միաբան ընթացեալք ի տեղի ճակատու. զինեցան հաւատով և կային յանդիման: Թուլացան կոյրովիք հաստաձիգ աղեղանց և տկար կանայքն վառեցան զինու. քաղաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք, ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր»:  
(Շարկան)

Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» հայտնի շարականի էջերն են զարդարում այստեղ բերված տողերը շարադրված Դ-րդ դարի առաջին քառորդում և նվիրված ս. կույսերի հիշատակին:

Մի գեղեցիկ կապակցութեամբ Սիմեոն Երևանցին, մեր տոնացուցի վերջին նորուիչը, այս սուրբ կույսերի տոնը սահմանել է կատարել Հոգեգալստից մի շաբաթ անց հետևյալ կարգով՝ երկուշաբթի՝ ս. Հովհ. սիմեի տոնը նախորդ կիրակի օրվա երկուշաբնի նախատոնակով և երկուշաբթվա հանդիսավոր պատարագով. երեքշաբթի՝ ս. Գայանեի տոնը նույն կարգով և նույն հանդիսավորութեամբ. հինգշաբթի՝ տոնախմբութիւնն ս. Շողակաթի վանքում դարձյալ նույն հանդիսավորութեամբ. շաբաթ օրը՝ Հայաստանի Երկրորդ լուսավորչի ելն ի Վերապեն տոնը, իսկ կիրակի Կաթողիկէ Մայր-Եկեղեցի ս. Էջմիածնի տոնը: Եվ որովհետև ս. կույսերի վկայաբանները գտնվում են Վաղարշապատում, միմյանց մոտ, չըջապատելով Կաթողիկէ Մայր-Եկեղեցին, ուստի այս տոնախմբութիւնները առավել շքեղութեամբ են կատարվում Վաղարշա-

պատում: Այս էջմիածնական շաբաթում ժողովուրդը սովորութիւն ունի խուռնեւրամ բաղնիքում լցնել այդ վանքերը և վերհիշել խորին անցյալում կատարված այն վարժանալի դեպքերը, որոնք հեթանոս Հայաստանը քրիստոնյա դարձրին:

Մի նվիրական, հուզիչ ու երկյուլած զգացում է պատում մեզ, երբ մտաբերում ենք, որ հայոց պաշտոնական եկեղեցու անդրանիկ նահատակները մի խումբ կույսեր են եղել, տկար ու անպաշտպան կանայք:

Ո՞վքեր էին դրանք:

Երբ եկեղեցին դեռ հալածական վիճակումն էր, քրիստոնյաները դադարի էին իրենց ժամերգութիւնը կատարում, իրենց կրօնական գրքերը ընթերցում և քարոզում քրիստոնեական կրօնի սկզբունքները:

Այսպես էին առաջին երեք դարերը:

Չնայած հալածանքին, քրիստոնեութիւնն ավելի ու ավելի էր տարածվում այն ժամանակվա աշխարհի ավելի քաղաքակիրթ մասում:

Հոռոմ այդ երկրներից մեկն էր: Երբ հալածանքը սաստկանում էր մի տեղում, քրիստոնյաները ամեն բան թողնում էին ու

փախչում ավելի ապահով վայրեր և այն-  
տեղ պատասպարվում:

Չորրորդ դարի հենց սկզբին Հռոմի Դի-  
ոկղեստիանոս կայսրը սաստիկ հայածանք  
հարուցեց քրիստոնյաների դեմ, որոնք  
ստիպված եղան փախչել այնտեղից: Մի  
խումբ քրիստոնյա կույսեր թրեկն դաշակ  
Գայանեի առաջնորդությամբ հեռացան  
Հռոմի շրջակայքից, մանավանդ երբ իմա-  
ցան, որ հեթանոս կայսրը ուզում է  
իրեն կին վերցնել իրենց խմբից չքնաղ ու  
զեղանի Հռիփսիմին: Կույսերը փախան ու  
եկան Հայաստան և բնակություն հաստա-  
տեցին մայրաքաղաքում՝ Վաղարշապա-  
տում: Բայց մարդկանց ավելորդ աչքերից  
ծածուկ մնալու համար բարվոք համարե-  
ցին բնակվել ոչ թե բուն քաղաքում, այլ  
քաղաքից դուրս՝ այլիներև հնձաններում:  
Նրանք իրենց ապրուստը հոգում էին ձեռքի  
աշխատանքով, հուլունքներ էին պատրաս-  
տում, ծախում մայրաքաղաքի շուկայում և  
այսպիսով իրենց գոյությունը պահպա-  
նում:

Սակայն երկար չի տևում նրանց հան-  
դեսը: Դիոկղեստիանոս կայսրից տեղեկա-  
նալով կույսերի Հայաստան տեղափոխվե-  
լու մասին, մանավանդ իմանալով նրանցից  
մեկի՝ Հռիփսիմի գեղեցկության մասին,  
Հայաստանի թագավոր Տրդատը շտապ  
կարգադրություն է անում անպատճառ  
դռնել կույսերին: Կարճ ժամանակից հետո  
նրանց դռնում են Վաղարշապատի հնձան-  
ներում: Հռիփսիմին տեսնելով բոլորը  
դարմանում են նրա գեղեցկության վրա և  
հափշտակվում նրանով: Իսկույն հաղոր-  
դում են թագավորին: Սա սաստիկ ուրա-  
խանում է և կարգադրում թագուհուն վա-  
յել եղանակով դարդարել նրան ու մեծ չքով  
բերել արքունիք որպես արքայի կին և հա-  
յոց տիկնանց տիկին: Բայց Հռիփսիմին  
այս բոլորից հրաժարվում է, ավելի լավ  
համարելով քրիստոնյա ընկերուհիներին հետ  
հնձաններում մնալ, ձեռքի աշխատանքով  
ապրել, նվիրված իր դավանած կրոնին,  
նրա դադափարներին, քան թե պալատ

դնալ ու գելի կյանք վարել հեթանոս թա-  
գավորի հետ:

Պալատական ծառայողները, որոնք  
հափշտակվել էին Հռիփսիմի գեղեցկու-  
թյամբ, ավելի են դարմանում, տեսնելով  
թե ինչպես մի թույլ աղջիկ հանդգնում է  
արքայի հրամանին ընդդիմանալ: Այս մա-  
սին շտապ հայտնում են թագավորին: Սա  
դարացած Հռիփսիմի հանդգնության վրա  
հրաման է տալիս բռնություն արքունիք  
բերել ստահակ գեղեցկուհուն: Երբ Տրդա-  
տը տեսնում է Հռիփսիմին պարթևիկ հա-  
սակով և սքանչելի գեղեցկությամբ, մո-  
լեղնաբար ստիպում է օրիորդին իր կնիք  
դառնալ: Բայց Հռիփսիմին դարացած և  
վճռականությամբ լցված դիմադրում է  
թագավորին և գերբնական զորություն  
ցուցադրելով, մինչև իսկ հաղթում է այն  
Տրդատին, որի անհաղթելիության մասին  
ասվում է. «Վասն զի սէղ իսկ էր առ հան-  
դերձս և այլ ուժով պնդութեան, հարստու-  
թեամբ, բուռն ոսկերօք և յաղթ մարմնով,  
քաջ և պատերազմող անհնարին, բարձր և  
լայն հասակաւ, որ դամենայն ժամանակս  
կենաց իւրոց պատերազմեալ և առնէր մար-  
տիցն յաղթութիւն: Մեծ անուն պարծա-  
նաց քաջութեան անձին ստանայր, և զհո-  
յակապ շքեղութիւն յաղթութեան ընդ ամե-  
նայն աշխարհ կացուցանէր» (Ագաթանգ-  
ղոսով. հայոց, էջ 71, Թիֆլիս, 1914):

Այս սարսափելի ուժի տեր մարդը, «որ  
այնպէս հռչակեալ էր ամենայնիւ, արդ  
յաղջկանէ միոյն պարտեալ վատթարա-  
նայր» (նույն, էջ 99):

Հաղթելով թագավորին և պատառոտե-  
լով նրա արքայական հանդերձն ու զար-  
դարանքները, հաղթողի վսեմ գիտակցու-  
թյամբ դիմված Հռիփսիմին դուրս է վա-  
ղում պալատից ու փախչում դեպի հնձան-  
ները ավետելով իր ընկերուհիներին տարած  
հաղթության մասին:

Այնուհետև մի փոքր ևս առաջ է գնում  
ու բարձրանում մի ավազոտ բլուր և ծըն-  
կաչոք գոհացողական աղոթքներ վերառա-  
քում արարչին իրեն շնորհած զորության  
համար: Հռիփսիմին հոգեկան հրճվանքի

մեջ էր. նա հաղթութիւն էր տարել մի գո-  
ռոզ արքայի դեմ: Ինչո՞ւ. իր ներքին, իր  
հոգու զորութեամբ: Իր ընկերուհիները,  
ինչպես և մայրաքաղաքի հեթանոս բնակիչ-  
ները, իմացան, որ մի անպաշտպան աղջիկ  
հաղթել է սեզ Տրդատին: Հռիփսիմեն հա-  
սով իր նպատակին: Կյանքն այլևս արժեք  
չունի նրա համար. նա այժմ պատրաստ է  
սիրով, հոգաբարձութեամբ կրել ամեն չարչա-  
րանք, ամեն նեղութիւն: Եվ թագավորի  
կողմից ուղարկված դահլճները նահատա-  
կեցին նրան հենց իր աղոթքի վայրում,  
իւր ընկերուհիների հետ միասին. նույն դա-  
հլճները նահատակեցին հնձանում մնացած  
բոլոր կույսերին, իսկ Գայաներին իր երկու  
ընկերուհու՝ հետ քաղաքի հարավային կող-  
մում:

Կույսերի նահատակման տեղում, հըն-  
ձաններում, Հայաստանի Երկրորդ Լուսա-  
վորիչը 66 օր քրիստոնեութիւն քարոզեց և  
հայ ժողովրդին նախապատրաստեց նոր  
կրոնն ընդունելու համար: Կույսերի նահա-  
տակման տեղերում Լուսավորիչը ժամանա-  
կավոր մատուռներ շինեց, որոնք հետագա-  
յում փառավոր տաճարների, վանքերի փո-  
խարկվեցին նրանց անունով, որոնք մինչև  
այսօր էլ դարդարում են Վաղարշապատն  
ու նրա շրջակայքը:

Անմեղ կույսերի թափած արյունն ար-  
դափանդ հողն էր ողողել և տվել առատ  
պտուղներ: Նրանց պայծառ հիշատակը  
միշտ ողևորում է մեր նախնիքներին, թե՛  
տղամարդկանց և թե՛ մանկանդ հայ կա-  
նանց, ժողովրդին հասած բոլոր փորձանք-  
ների ժամանակ:

150 տարի Հռիփսիմյանց կույսերի նա-  
հատակութիւնից հետո Վարդանանց աղմու-  
կահույզ ժամանակաշրջանում, երբ Հա-  
յաստանի նախարարների մեծ մասը օտա-  
րութեան մեջ էր պարսից թագավորի մոտ,  
հայ կանայք շտեմնված համբերութեամբ  
էին դիմանում իրենց այրիացած քնտանիք-  
ների գլխին թափված փորձութիւններին,  
դրկանքներին, դառնութիւններին: Քաղց-  
րազրուցիկ Նիշիշն նկարագրում է այդ ժա-  
մանակաշրջանի հայ կանանց տոկունու-

թիւնը և արիութիւնը վերահաս փորձան-  
քին դիմանալու մեջ. «Իսկ կանայք երանե-  
լի առաքինեացն և կապելոցն և անկելոցն  
ի պատերազմին... ոչ ինչ յիշեցին ամենեկն  
զանուն փափկութեան մայրենի աղատու-  
թեանն, այլ իբրև մարդք, որ վշտամբերը  
լեալ իցեն անդատին ի շինական սովորու-  
թեանցն տանջելով վարեալ զկեանս աշխար-  
հիս, անդրազոյնք ևս քան զնոսա յանձն  
առին զհամբերութիւն վշտաց:

... Թէպէտ և ունէին զկարգանշլուր  
ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երևէր ի նո-  
ցանէ, թէ որ տիկինն իցէ և կամ որ նա-  
թիշտն. մի հանդերձ էր հասարակաց, և  
միապէս զետնախշտիկը երկոքեան (Նիշիշի  
պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913  
թիվ. էջ 259—263):

Հայ եկեղեցին չի մոռացել Հռիփսի-  
մյան կույսերին: Նրանց դամբարանների  
վրա կառուցված փառահեղ վանքերը, ո-  
րոնք հայկական ճարտարապետութեան հո-  
յակապ կոթողն են, արտահայտում են այն  
խորը երախտագիտական դրացմունքը, որ  
եկեղեցին տածում է դեպի նահատակները:  
Ամեն տարի հայ եկեղեցին հանդիսավոր  
չքով տոնում է նահատակ կույսերի հիշա-  
տակը և հանապաղ աղոթքներ վերստաքում  
Բարձրյալին:

Հետագա դարերում ևս հայ կինը միշտ  
կենդանի է պահել Հռիփսիմյանց և Գայա-  
նյանց քաղցր հիշատակը և աշխատել է  
նմանվել նրանց, դործելով նոր հանգա-  
մանքներում, նոր պայմաններում կյանքի  
բազմազան ճյուղերում նվիրված իր պաշ-  
տած գաղափարներին: Որպես օրինակ բա-  
վական է մատնացույց անել թեկուզ հենց  
մեր ապրած այս ահեղ ժամանակաշրջանը,  
երբ քաղաքակիրթ մարդկութեան լավա-  
զույն մասը, մեր մեծ Միութեան բոլոր  
ժողովուրդները, հանուն արդարութեան,  
աղատութեան և բոլոր ազգերի իրավահա-  
վասարութեան կռիվ է մղում խավարի, մո-  
լեռանդութեան ու մարդատեցութեան ներկա-  
յացուցիչ Հիտլերի և նրա արգահատելի ար-  
քանյակների դեմ, հայ կինը Հայրենական  
այս փրկակար մեծ պատերազմում փոխու-

րինում է իր տղամարդուն աշխատանքի բուրք ընտրամիտներում թե՛ քաղաքում, թե՛ դքսւղում, թե՛ դուրծարանում, թե՛ դաշտերում:

Թիկունքում ցուցարեւած իր-այդ անձնակեր աշխատանքով հայ կիներ ամբարշտում է ուղմածակատում անարդ թշնամու դեմ կռիւղ իր հարազատ նարմիր Բանակի հերոսական պայքարը հանուն վերջնական հաղթանակի:

Մական յայդ դեռ բոլորը չէ: Հայ կիներ Սոփեռական Միութեան բաղմահաղար

կանանց շարքերում որպէս ուղմի մարտիկ այսօր մարտնչում է Փաշխատական հորդանների դեմ և մեր Հայրենիքի պաշտպանութեան սրբազան դուրծում ցույց տալով խիղիւութեան, անձնութեան հուզիչ օրինակներ բարձր պահում իր հարազատ Մայր Ժողովրդի պանծալի անունը, Ժողովրդի, որի պատմութեան փառավոր էջերը դարդարում են հայ կարիճների վտեմ հրաշագործութիւնները ընդդեմ բռնութեան, հանուն Մայր երկրի ազատութեան և անկախութեան:

ՃԵՄԱՐԱՆՑԻ

